

## References:

1. **Avetisyan G.**, Adverbial polysemantic words and their teaching, State university of Shirak, Scientific proceedings, Erevan, 2020.
2. **Galstyan H.**, Native Language Class. Teaching Adjectives in Elementary School.
3. **Khachatryan S.**, Teaching lexical and semantic categories of the adjective in the secondary school
4. **Khachatryan S.**, The Teaching of Language Knowledge in Elementary Classes Based on the Program Requirement, State university of Shirak, Scientific proceedings, Erevan, 2014.
5. **Muratsan**, Innocent Conversations, Collection of Poems, Vol. 6, Yerevan, 1963.
6. **Sargsyan A.**, Hambardzumyan S., Culture of the Armenian Language and Speech, Educational Manual, Yerevan, 2012.
7. **Sargsyan V.**, Primer, Yerevan, 2020.
8. **Sargsyan V.**, Native Language 1, 2020.
9. **Smbatyan L.**, Peculiarities of Vocabulary Enrichment in Preschool Age, Nakhshavigh, 1. 2017.

*Материал был представлен и отправлен на рецензию: 08.10.2021*

*Принято к публикации: 27.10.2021*

*Рецензент: канд. биол. наук, ассистент Мери Оганнисян*

*The material was submitted and sent to review: 08.10.2021*

*Was accepted for publication: 27.10.2021*

*Reviewer: Ph.D., Assistant Mary Hovhannisyann*

**378.147:811.19**

## ՊՐՈՒԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

**Հովհաննիսյան Մերի**

*Երևանի պետական համալսարան,  
Հայաստան*

**Համառոտ ներածական:** Ուսումնական գործընթացի զարգացման, կատարելագործման ուղիների որոնումը հանգեցնում է մանկավարժական տարբեր տեխնոլոգիաների մշակման, որոնց շարքում է նաև պրոբլեմային ուսուցումը, այսինքն՝ ուսուցման գործընթացի այնպիսի կազմակերպումը, որը սովորողին ստեղծված իրավիճակը գիտակցելու, առաջադրված խնդրում եղած հակասությունները հայտնաբերելու, չիմացածն ու անհայտը որոնելու, խնդիրը լուծելու և վերջնական նպատակին հասնելու հնարավորություն է ընձեռում: Նշված տեխնոլոգիայի էությունը պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է, որը նպաստում է ուսանողների մտածողության մակարդակի բարձրացմանը:

Մերօրյա տեղեկատվական դարաշրջանում սովորողները ամրապնդման ենթակա նյութի ծավալների աճին զուգահեռ հաճախ ոչ թե ամրապնդում, այլ պարզապես մտապահում են յուրացման համար նախատեսված նյութերը, այն էլ՝ շատ կարճ ժամանակով և միայն դասահարցմանը կամ քննությանը պատրաստ լինելու համար: Բուհական դասընթացում թեմային հատկացված ժամանակահատվածի սահմանափակությունը, ուսանողների թիվը հնարավորություն չեն տալիս դասախոսին պարզելու՝ արդյո՞ք թեման յուրացվել է յուրաքանչյուր սովորողի կողմից, հարցման ենթարկված ուսանողը իրականում ամրապնդել է թեման, թե՞ պարզապես կարողանում է վերարտադրել մտապահածը: Բացի դրանից՝ լսարանային պայմաններում նույն թեման միևնույն ժա-

մանակահատվածում և միևնույն մեթոդներով, ընդհանուր կամ միևնույն ուսումնական ծրագրերով ուսումնական խմբի յուրաքանչյուր սովորողի կողմից չի կարող յուրացվել նույն աստիճանով, քանի որ տարբեր ուսանողներ ունեն տարբեր ընդունակություններ: Ուստի դասախոսները հաջորդ նյութին անցնելուց առաջ բավարարվում են սովորողների կողմից տվյալ թեմայի յուրացման աստիճանի գնահատմամբ: Նմանօրինակ խնդիրների լուծման արդյունավետ ուղիներ են առաջարկում ուսուցման նորարարական բազմաթիվ տեխնոլոգիաներ, որոնցից մեկն էլ պրոբլեմային ուսուցումն է:

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան մշակել է Ջ. Դյուին: «Ինչպե՞ս ենք մենք մտածում» աշխատության մեջ (1909) ամերիկացի փիլիսոփա, հոգեբան ուսուցիչը մերժում է ավանդական դոգմատիկ ուսմունքը՝ դրան հակադրելով խնդիրների լուծման գործում ուսանողների ակտիվ և անկախ պրակտիկ գործունեությունը: «Մտածմունքն սկսվում է այնտեղ, որտեղ առկա է խնդրահարույց իրավիճակ, և դա խնդիրների լուծումն է», – ասում է Դյուին: Նրա այս բանաձևը XX դարում ձևավորեց պրոբլեմային ուսուցման հիմքը [6, էջ 68]:

Պրոբլեմային ուսուցման տեսության զարգացման մեջ էական դեր է խաղացել ամերիկացի հոգեբան Ջ. Բրուների հայեցակարգը, որը հիմնված է ուսուցման նյութի կառուցվածքի և նոր գիտելիքների յուրացման գործընթացում ինտուիտիվ մտածողության գերիշխող դերի վրա: Ճանաչելով տրամաբանական մտածողության զարգացումը որպես ուսուցման նպատակ՝ Ջ. Դյուին, Ջ. Բրուները, Վ. Բարթոնը նշում են ուսուցման մեջ խնդրահարույց մոտեցման կարևորությունը [7, էջ 35, 9, էջ 16-18]:

Ինչպես ուսուցման մյուս տեխնոլոգիաները, պրոբլեմային ուսուցումը ևս նպատակաուղղված է կրթության որակի բարձրացման խնդրի լուծմանը, որն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսուցման գործընթացի կազմակերպման նորարարական միջոցների օգնությամբ:

**Բանալի բառեր:** Ուսուցման տեխնոլոգիա, ուսուցման մեթոդ, պրոբլեմային ուսուցում, պրոբլեմային հարց, ուսուցման ժամանակակից մեթոդներ, փոխգործուն մեթոդներ, հայոց լեզվի բուհական դասընթաց, քերականության ուսուցում:

**Հիմնախնդիրը:** Ուսուցման ժամանակակից մեթոդները նոր պահանջներ են առաջադրում հայոց լեզվի ուսուցման գործընթացում: Մի կողմից ուսուցման գործընթացում հաշվի են առնվում տեսական նյութը սովորողներին դյուրընկալ դարձնելու, համապարփակ ուսուցանելու, համապատասխան մեթոդ ընտրելու, մյուս կողմից սովորողների՝ բառաձևերը ճշգրտորեն կազմելու, սխալ բառաձևեր չկիրառելու, բառագործածության սխալներից զերծ մնալու գործոնները: Պրոբլեմային ուսուցման միջոցով հնարավոր է ոչ միայն արդյունավետորեն իրականացնել տեսական նյութի ուսուցումը, այլև սովորողի մոտ ստեղծել ինքնազարգացման հմտություններ: Այդ ամբողջ գործընթացը հիմնված է առաջնային՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման ու զարգացման և երկրորդային՝ երկարաժամկետ անհատական կարողությունների զարգացման արդյունքների գիտակցված ընտրության վրա: Հետևաբար պրոբլեմային տեխնոլոգիայով իրականացվող դասերի արդյունավետությունը շատ ավելի բարձր կլինի, եթե սովորողը կարողանա ինքնուրույն տիրապետել գիտելիքներին, և մանկավարժը լոկ ղեկավարի այդ գործընթացը վերահսկմամբ [8, էջ 54]: Ներկայումս լայնորեն կիրառվող առցանց և խառը կամ հիբրիդային եղանակով ուսուցման դեպքում ևս պրոբլեմային ուսուցումը նյութի բազմաշերտ ընկալման հրաշալի հնարավորություններ է ընձեռում:

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան հիմնվում է հետևյալ գաղափարի վրա. պրոբլեմային իրավիճակների կիրառումը սովորողին կանգեցնում է կանխատեսված դժվարությունների առաջ, որոնց հաղթահարումը պահանջում է ստեղծագործական որոնում և ստիպում է սովորողին մտածել, որոնել, քննարկել, ինչն էլ նպաստում է նրա իմացական հետաքրքրությունների զարգացմանը: Ուսանողը պետք է ինքնուրույն որոնի խնդրի լուծումը, իսկ դասախոսը պարտավոր է ղեկավարել նրա ուսուցման գործընթացը՝ մոտիվացնելով, կազմակերպելով, համակարգելով, ուղղորդելով և վերահսկելով: Պրոբլեմային ուսուցումը հնարավորություն է ընձեռում, որ սովորողի մոտ ձևավորվեն ինքնակրթության հմտություն, նպատակադրման կարողություն, ձևավորվեն և զարգանան համագործակցային այնպիսի օգտակար հմտություններ, ինչպիսիք են՝ ինքնագնահատումը, ինքնավերահսկումը, փոխադարձ վերահսկումը: Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան ապահովում է նաև ուսուցման անհատականացում՝ ըստ ուսուցման բովանդակության, յուրացման արագության, ինքնուրույնության մակարդակի, վերահսկման եղանակների: Հայերենի քերականության առանձնահատկությունների ուսուցումը ժամանակակից տեխնոլոգիաներով ու մեթոդներով կարող է ուղենշային լինել սովորողների՝ հայերենի քերականական համակարգի յուրահատկությունների ընկալման առումով:

**Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն:** Գ. Կ. Մելնիկոն իր «Ուսուցման տեխնոլոգիաների հանրագիտարան» աշխատության մեջ անդրադարձել է պրոբլեմային ուսուցման առանձնահատկություններին՝ այն դիտարկելով որպես ուսուցման ակտիվ տեխնոլոգիա [10, էջ 195]: Հեղինակը մանրամասնորեն վերլուծում է տարբեր մանկավարժների տեսակետները պրոբլեմային ուսուցման վերաբերյալ: Պրոբլեմային ուսուցման տեսության զարգացման գործում մեծ ներդրում են ունեցել Մ. Ի. Մախմուտովը, Ա. Մ. Մատյոշկինը, Ա. Վ. Բրուշինսկին, Տ. Վ. Կուրյավցևը, Ի. Յա. Լերները, Ի. Ա. Իլինցկայան, Ս. Ա. Ռուբինշտեյնը, Լ. Ս. Վիգորսկին, Ա. Ն. Լեոնտևը: «Պրոբլեմային ուսուցում. անցյալը, ներկան, ապագան» կոլեկտիվ մենագրությունում մանրամասնորեն ներկայացվում է ուսուցման նշված տեխնոլոգիայի զարգացման ողջ ընթացքը [9]:

Է. Զավարյանն ընդգծել է տարբեր առարկաների ուսուցման ժամանակ խնդրահարույց իրավիճակների ստեղծման մեթոդների և խնդրի ճանաչողական առաջադրանքների բարդության գնահատման չափանիշների կարևորությունը [3, էջ 44-45]:

Մ. Դավթյանի և այլ հեղինակների «Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ» աշխատությունում պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան դիտարկվում է որպես ուսուցման արդիական մոտեցում: Այսօր անհրաժեշտ է սովորողին ցույց տալ նյութի արդիականությունն ու կիրառելիությունը առօրյա կյանքում, որպեսզի նա հասկանա, թե ինչ իմաստ ու նշանակություն ունի նշված առարկայի շրջանակներում ստացած գիտելիքը հասարակական կյանքում [2, էջ 7]:

**Հոդվածի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակը:** Հետազոտության նպատակն է մեթոդաբանորեն հիմնավորել պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկությունները հայոց լեզվի բուհական դասընթացում՝ մեթոդական քայլաշարի միջոցով ընդգծելով թեմայի ուսուցման ժամանակ երևան եկող խնդիրները, դժվարությունները և առաջարկելով դրանց լուծման ուղիներ:

**Հետազոտության նորույթը:** Մանրամասնորեն ներկայացնելով պրոբլեմային ուսուցման առանձնահատկությունները՝ առաջին անգամ վեր են հանվել պրոբլեմային տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկությունները, պրոբլեմային իրավիճակների

ստեղծման տարբեր եղանակները հայոց լեզվի բուհական դասընթացում՝ մեթոդական նպատակային ու հաջորդական քայլերի իրացմամբ:

**Հիմնական նյութի շարադրանքը:** Ուսումնական նյութի բովանդակությամբ և սովորողների տարիքային ու հոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված՝ առաջարկվում են պորբլեմային իրավիճակների ստեղծման տարբեր եղանակներ:

1. **Անալոգիայի եղանակ:** Այս դեպքում ուսուցանողը հենվում է սովորողների փորձի վրա կամ արդիականացնում է նրանց նախկինում ստացած գիտելիքները նոր խնդիրների լուծման համար: Օրինակ՝ դերանունների տեսակների ուսուցման ժամանակ դասախոսը, հիմնվելով սովորողների՝ խոսքի մասերի մասին ունեցած գիտելիքների վրա, հակադրության և համեմատության մեթոդներով կարող է ընկալելի դարձնել դերանունների արտահայտած տարբեր իմաստները և համապատասխան խոսքի մասերից ունեցած տարբերությունները: Կարող է կիրառել T-աձև աղյուսակի մեթոդը.

ԴԵՐԱՆՈՒՆ	ԱՇՄԿԱՆ
ԱՅՄՊԻՍԻ ԳԻՐՔ	հետաքրքիր գիրք
ԱՅԴՊԻՍԻ ՄԱՐԴ	լավ մարդ
ԱՅՆՊԻՍԻ բան	գարմանալի բան

Այսպես սովորողների համար ակնհայտ է դառնում՝ դերանվան հատկանշային իմաստը դրսևորվում է ընդհանրական ձևով, առանց կոնկրետացման, իսկ ածականի դեպքում առկա է հատկանշային հստակ իմաստ:

2. **Մակաձական - վերլուծական - համադրական եղանակ:** Սովորողներն ինքնուրույն ուսումնասիրում են երևույթն ու փաստերը և անհրաժեշտ եզրակացություններ կատարում: Օրինակ՝ ուսանողներին հանձնարարվում է տարբեր տեքստերից դուրս բերել հոգնակի թվով կիրառված գոյականներ: Ձևակերպվում է պորբլեմային խնդիր՝ ըստ օրինակների՝ սահմանել գոյականի թվի քերականական կարգին առնչվող կանոնները: Այնուհետև առաջադրվում է հարց՝ ի՞նչ հոգնակերտ մասնիկ կստանան *մեծատուն, թոնրատուն, դեղատուն, ստորակետ, վերջակետ, ժամկետ, տեսակետ, ատամնաշար, ֆիլմաշար, գրաշար, պատշար, նստացույց, զորացույց, կողմնացույց, ժամացույց, սեպագիր, անձնագիր, պատմագիր, գյուղագիր, նոնահատ, գարեհատ, փայտահատ, դրամահատ, մատնաչափ, հարթաչափ, հանքահոր, հանքափոր* բառերը: Ուսանողները Վենի գծապատկերում գրում են նշված բառերը՝ առանձնացնելով հոգնակիակազմության երկու կանոն.

✓ մեջբերված օրինակները բարդ գոյականներ են, որոնք ունեն միավանկ գոյական վերջնաբաղադրիչ,

✓ առաջին շարքի գոյականները *-եր* հոգնակերտ են ստանում, քանի որ վերջնաբաղադրիչ գոյականը պահպանում է իր իմաստը, իսկ երկրորդ շարքի գոյականների վերջնաբաղադրիչը չի պահպանում իր իմաստը, հետևաբար նշված բառերը *-ներ* հոգնակերտ մասնիկ են ստանում:

3. **Ուսումնասիրվող այս կամ այն երևույթի պատճառների որոնում:** Պորբլեմային ուսուցման այս եղանակը կիրառվում է այն դեպքում, երբ խնդրի լուծման կամ նոր գիտելիքների ձեռքբերման համար պահանջվում է գործածել ավելի վաղ ուսումնասիրված

սկզբունք կամ օրինաչափություն: Օրինակ՝ *ինչո՞ւ ժանգոտել, մրոտել, կեղտոտել, ցեխոտել* և նմանօրինակ բայեր բազմապատկական չեն: Եթե սովորողը ի մի բերի ածականի կազմության մասին ունեցած գիտելիքները, կկարողանա նշված պրոբլեմային հարցի պատասխանը հիմնավորել: Նշված բայերը կազմված են *-ոտ* ածանց ունեցող ածականներից և չունեն իրենց սկզբնաձև անորոշ դերբայը, որին բազմապատկական *-ոտ-* ածանցը ավելացնելով՝ կարող էին կազմել բազմապատկական բայաձևեր, բացի դրանից՝ նշված բառերը չեն արտահայտում նաև այդ բայերին բնորոշ իմաստ:

**4. Հակասական փաստի հաղորդում:** Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան ենթադրում է նաև սովորողներին հակասական լեզվական իրողությունների, փաստերի հաղորդում: Վերջիններս հստակ օրինակներով պետք է կարողանան հիմնավորել ներկայացվող լեզվական փաստերի հակասականությունը: Դիտարկենք օրինակ: Դասախոսը պնդում է, որ *կառչել, երկնչել, մարտնչել, զբոսնել, խթանել* բայերը սուսկաձանցավոր են, քանի որ ունեն *-չ-*, *-ն-*, *-ան-* սուսկաձանցներ: Ուսանողները բայի կազմության թեմայի վերաբերյալ ստացած գիտելիքների հիման վրա կարող են բացատրել, որ նշված բայերը ածանցավոր չեն.

- *-Ն-*, *-չ-* ածանց ունեցող բայերի դեպքում ածանցն ընկնում է հարակատար, վաղակատար, ներկա վաղակատար, անցյալ վաղակատար, անցյալ կատարյալ, հրամայական ապառնիի ձևերում: Եթե կազմենք համապատասխան բայաձևերը, ակնհայտ կդառնա, որ բերված օրինակներում *-ն-* և *-չ-* ն ածանց չեն:

- *-Ան-* ածանց ունեցող բայերի անցյալի հիմքը ցոյական է՝ *-աց-* բաղադրիչով, ինչպես՝ *մեծանալ-մեծացա, իմանալ-իմացա*, իսկ *խթանել* բայի դեպքում նման փոփոխություն չկա՝ *խթանեցի, խթանի՛ր* և այլն:

**5. Լեզվաբան(ներ)ի կարծիքի հիման վրա պրոբլեմային իրավիճակների ստեղծում:** Ուսանողներին առաջադրվում է հարց: Նախկինում գրական հայերենում պայմանական եղանակի ժխտական խոնարհման կանոնավոր ձևեր են համարվել *չեմ կարդալ, չեի կարդալ, չեմ գրի, չեի գրիլ* բայաձևերը, իսկ ժողովրդախոսակցական լեզվում գործածվող *չեմ կարդա, չեի կարդա, չեմ գրի, չեի գրի* ձևերը դիտարկվել են ոչ կանոնավոր [1, էջ 81]: Լեզվի հետագա զարգացման ընթացքում հաղթանակեց ժողովրդական ձևը, որը Ա. Ղարիբյանն անվանեց ըղձական [4, էջ 262], հետագայում Գ. Սևակը նշված դերբային տվեց ժխտական անվանումը [5, էջ 187]: Ինչո՞վ էին պայմանավորված նշված դերբային տրված *ըղձական* և *ժխտական* անվանումները: Ակնկալվող պատասխաններն են.

- ըղձական անվանումը պայմանավորվել է նրանով, որ այս դերբայը ձևով նման է ըղձական եղանակի ապառնի ժամանակի եզակի երրորդ դեմքին, օրինակներ՝ *գրի, խոսի, խաղա, իմանա* և այլն,

- ժխտական անվանումը պայմանավորված է նրանով, որ այս ձևաբայը կիրառվում է միայն ենթադրական կամ պայմանական եղանակի ժխտական ձևերի կազմության ժամանակ, օրինակներ՝ *կգրի – չի գրի, կխոսի – չի խոսի, կխաղա – չի խաղա, կիմանա – չի իմանա* և այլն:

**Եզրակացություն:** Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան բովանդակում է պրոբլեմային իրավիճակների ստեղծման տարբեր եղանակներ, մեթոդներ, որոնք՝ որպես ուսուցման արդյունավետ հնարներ, առավել մատչելի ու նպատակային են դարձնում առարկայական գիտելիքի յուրացումը: Հայոց լեզվի բուհական դասընթացում, հատկապես քերականության ուսուցման ժամանակ պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան ենթադրում է նոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների մշակում և ամ-

րապնդում, սովորողների ստեղծագործական մտածողության ու անձնային այլ որակների զարգացում: «Պրոբլեմային ուսուցման» մեթոդները ենթադրում են դասավանդողի կողմից պրոբլեմի առաջադրում, ձևակերպում, լուծում՝ ցույց տալով դրանց լուծման ուղիները: Այս տեխնոլոգիայի էությունն այն է, որ դասավանդողը ցուցադրում է գիտական ճանաչողության, խնդիրների լուծման օրինակներ, արդյունքում ամրապնդվում ու յուրացվում են պրոբլեմային ուսուցման մեթոդներով ձեռք բերված գիտելիքները:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Աբեղյան Մ., Տարրական քերականություն, Թիֆլիս, 1910:
2. Դավթյան Մ. և ուրիշներ, Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Երևան, 2004:
3. Զավարյան Է., Կենսաբանության դպրոցական դասընթացում պրոբլեմային ուսուցման կիրառման օրինակներ, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, Երևան, 2008, թիվ 3/4:
4. Ղարիբյան Ա., Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Երևան, 1937:
5. Սևակ Գ., Հայոց լեզվի տեսություն, Կ. Ա, Երևան, 1939:
6. Дьюи Дж., Психология и педагогика мышления / Пер. с англ. Н. М. Никольской; Под ред. (и с предисл.) Н. Д. Виноградова, Москва: «Мир», 1915.
7. Матюшкин А. М., Проблемные ситуации в мышлении и обучении, Москва: «Педагогика», 1972.
8. Осмоловская И. М., Организация дифференцированного обучения в современной общеобразовательной школе, М., Воронеж, 1998.
9. Проблемное обучение: прошлое, настоящее, будущее: Коллективная монография: в 3 кн., кн. 1, под ред. Е. В. Ковалевской, Нижневартовск: Изд-во Нижневарт. гуманитар. ун-та, 2010.
10. Селевко Г. К., Энциклопедия образовательных технологий. В 2-х т., т. 1, Москва: «Народное образование», 2005.

## **ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ ТЕХНОЛОГИИ ПРОБЛЕМНОГО ОБУЧЕНИЯ В ВУЗОВСКОМ КУРСЕ АРМЯНСКОГО ЯЗЫКА**

**Օգաննիսյան Մերի**  
*ԷԴՄ, Արմենիա*

### **Аннотация**

Проблемное обучение является технологией развития учащихся, формирования их убеждений, применения изученного на практике. Она используется при возникающих в процессе обучения проблемных ситуациях и выдвигает проблемные вопросы. Эта технология обучения, отвечая на выдвинутые проблемные вопросы, активизирует познавательную деятельность учащихся, развивает мышление, позволяет пополнить багаж знаний учащегося.

Применение технологии проблемного обучения в вузовском курсе предполагает подготовительную работу. Во-первых, необходимо в отдельности изучить учебный материал всей темы и каждого урока, выделить основные идеи и сформулировать для учащихся цель обучения, чтобы показать, что в конце урока студент должен уметь, знать, уметь понимать, определять, какие другие навыки должен приобрести. Во-вторых, нужно выбрать для студентов дополнительные материалы (например, книги, различные интернет-ресурсы), а также дать им разные задания, тесты. В зависимости от объема учебного материала работа, организованная в соответствии с технологией проблемного обучения, может включать в себя весь урок или его часть.

Технология проблемного обучения обеспечивает индивидуализацию с точки зрения обучения, скорости усвоения, уровня независимости, методов обучения, способов контроля и самоконтроля. Она предусматривает создание положительных мотиваций обучения за счет новизны содержания, появления эмоционального содержания, организации учебных исследований и преодоления познавательных трудностей. В вузовском курсе армянского языка использование технологии проблемного обучения эффективно, в особенности, при обучении грамматике, в частности, при изучении семантических, прикладных особенностей частей речи, грамматических категорий,

глагольных аффиксов, видо-временных форм глагола, посредством сочетания приемов проблемного обучения с интерактивными методами.

**Ключевые слова:** технология обучения, метод обучения, проблемное обучение, проблемный вопрос, современные методы обучения, интерактивные методы, вузовский курс армянского языка, обучение грамматике.

#### **Список использованной литературы**

1. Абемян М., Элементарная грамматика, Тбилиси, 1910.
2. Гарибян А., Введение в изучение истории армянского языка, Ереван, 1937.
3. Давтян М. и др., Подходы к разработке и интеграции учебных программ, Ереван, 2004.
4. Дьюи Дж., Психология и педагогика мышления / Пер. с англ. Н. М. Никольской; Под ред. (и с предисл.) Н. Д. Виноградова, Москва: «Мир», 1915.
5. Заварян Э., Примеры применения проблемного обучения в школьной биологии, Научно-методический аналитический журнал «Педагогика», Ереван, 2008, № 3/4.
6. Матюшкин А. М., Проблемные ситуации в мышлении и обучении, Москва: «Педагогика», 1972.
7. Осмоловская И. М., Организация дифференцированного обучения в современной общеобразовательной школе, М., Воронеж, 1998.
8. Проблемное обучение: прошлое, настоящее, будущее: Коллективная монография: в 3 кн., кн. 1, под ред. Е. В. Ковалевской, Нижневартовск: Изд-во Нижневарт. гуманит. ун-та, 2010.
9. Севак Г., Теория армянского языка, Ереван, 1939.
10. Селевко Г. К., Энциклопедия образовательных технологий. В 2-х т., т. 1, Москва: «Народное образование», 2005.

### **PECULIARITIES OF APPLICATION OF PROBLEM-BASED LEARNING TECHNOLOGY IN THE UNIVERSITY COURSE OF THE ARMENIAN LANGUAGE**

*Hovhannisyana Mary  
YSU, Armenia*

#### **Summary**

Problem-Based Learning is a technology for the development of students, the formation of their beliefs, the application of what has been learned in practice, which is used when problematic situations arise in the teaching process and raises problematic questions. This teaching technology, answering the raised problematic questions, activates the cognitive activity of students, develops thinking and allows replenishing the luggage of the student's knowledge.

The application of the Problem-Based Learning technology in the university course supposes the preparatory work. First of all, it is necessary to study the teaching material of the entire topic and each lesson separately, highlight the main ideas and formulate the learning goal for students in order to show that at the end of the lesson the student should learn, know, be able to understand and determine what other skills should be acquired. Secondly, it is necessary to choose additional materials for students (for example, books, various Internet resources), as well as to give them different assignments and test-works. Depending on the volume of the educational material, the work organized in accordance with the technology of Problem-Based Learning may include the whole lesson or a part of it.

The Problem-Based Learning technology provides individualization in terms of learning, speed of apprehension, the level of independence, teaching methods, the methods of control and self-control. It foresees the creation of positive motivations of teaching due to the novelty of the content, the appearance of emotional content, the organization of educational researches and overcoming of cognitive difficulties. In the university course of the Armenian language, the application of the Problem-Based Learning technology is effective, especially when teaching grammar, in particular, when studying the semantic and applied features of parts of speech, grammatical categories, verb affixes, aspect and tense forms of the verb, through the combination of problematic teaching techniques with interactive methods.

**Keywords:** teaching technology, teaching method, problem-based learning, problematic issue, modern teaching methods, interactive methods, the university course of the Armenian language, teaching grammar.

## References:

1. Abegyan M., Elementary grammar, Tbilisi, 1910.
2. Davtyan M. et al., Approaches to the development and integration of curricula, Yerevan, 2004.
3. Dewey J., Psychology and Pedagogy of Thinking / Per. from English N. M. Nikolskaya; Ed. (and with a foreword) ND Vinogradov, Moscow: "Mir", 1915.
4. Garibyan A., Introduction to the study of the history of the Armenian language, Yerevan, 1937.
5. Matyushkin A. M., Problematic situations in thinking and learning, Moscow: "Pedagogy", 1972.
6. Osmolovskaya I. M., Organization of differentiated education in a modern secondary school, M., Voronezh, 1998.
7. Problematic learning: past, present, future: Collective monograph: in 3 vols, Vol. 1, Ed. E. V. Kovalevskaya, Nizhnevartovsk: Nizhnevartovsk publishing house. humanizes. University, 2010.
8. Selevko G. K., Encyclopedia of educational technologies. In 2 volumes, Vol. 1, Moscow: "Public education", 2005.
9. Sevak G., Theory of the Armenian language, Yerevan, 1939.
10. Zavaryan E., Examples of application of problem-based teaching in school biology, Scientific-methodical analytical journal "Pedagogy", Yerevan, 2008, № 3/4.

*Материал был представлен и отправлен на рецензию: 26.09.2021*

*Принято к публикации: 30.10.2021*

*Рецензент: канд. фил. наук, доцент Арменуи Арзуманян*

*The material was submitted and sent to review: 26.09.2021*

*Was accepted for publication: 30.10.2021*

*Reviewer: Assoc. Prof., Ph.D. Armenuhi Arzumanyan*

378.17

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

**Պապիկյան Արսեն**

*Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի  
պետական ինստիտուտ,  
Հայաստան*

**Համառոտ ներածական:** Արդի ժամանակաշրջանում կարևորվում է ֆիզիկական դաստիարակության ոլորտում բարձր որակավորում ունեցող մասնագետների պահանջը, որոնք պետք է ունենան ոչ միայն գիտելիքների բարձր մակարդակ, այլև տիրապետեն ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին:

Միանգամայն հասկանալի է, որ ֆիզկուլտուրայի ինստիտուտի ուսանողները պետք է ժամանակակից այս պահանջները կարողանան արդյունավետորեն իրականացնել մանկավարժական պրակտիկայի ընթացքում:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում մասնագետների պրոֆեսիոնալ մանկավարժական պատրաստության հիմնախնդիրները տարբեր տարիների ընթացքում ուսումնասիրվել են բազմաթիվ հեղինակների կողմից [13, էջ 24]:

**Հիմնախնդիրը:** Մանկավարժական պրակտիկական ֆիզիկական դաստիարակության մասնագետի պատրաստման ողջ համակարգի անբաժանելի մասն է, որի միջոցով ամրապնդվում և կատարելագործվում են ինստիտուտում տեսական ու գործնական պարապմունքների ընթացքում ստացած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները: